

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. հունիսի 17-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 33-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում:
2. Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Գնել Մուղնեցյանին և Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Արման Սարգսյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու երաշխավորության հարց:
3. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Դիլբանդյան):
4. 2015-2016 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):
5. 2016-2017 ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածության և դասախոսների անհատական բեռնվածության հաստատում:
6. Իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Իրավաբանական կլինիկայի տնօրեն Ն.Ավագյան):
7. Ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ ՈԻԳԸ նախագահ Լ.Պետրոսյան):
8. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆ. Գ.Հարությունյան):

Ձեկուցողը հայտնեց, որ սույն թվականի հունիսի 9-ին, որպես ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի բյուրոյի անդամ, մասնակցել է Վենետիկի Հանձնաժողովի բյուրոյի նիստին, որին քննարկվել են Հանձնաժողովի 107-րդ լիազումար նիստի աշխատանքների կազմակերպման հարցերը: Բյուրոյի նիստին հաջորդել է պրոֆ. Գ.Հարությունյանի աշխատանքային հանդիպումը

Վենետիկի Հանձնաժողովի Նախագահ պրն Ջ. Բուքիքիոյի և Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի գլխավոր քարտուղար պրն Շ. Դյուրի հետ, որի ընթացքում քննարկվել են սույն թվականի հոկտեմբերի 20-23-ը Երևանում հրավիրվելիք համաեվրոպական խորհրդաժողովի հայեցակարգին առնչվող հարցեր: Ձեկուցողը հայտնեց, որ խորհրդաժողովի հայեցակարգի շրջանակներում քննարկվելու են հետևյալ երեք հիմնահարցերը.

- Սահմանադրական դատարանի դերը օրենքի բացի և իրավական անորոշության հաղթահարման գործում.

- Համակարգային սահմանադրական մշտադիտարկման տեղը և դերը սահմանադրական վերահսկողության համակարգի կատարելագործման և սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման գործում.

- Վենետիկի Հանձնաժողովի 106-րդ լիագումար նիստում ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկի» դերը և նշանակությունը մշտական սահմանադրական ախտորոշման և մշտադիտարկման իրականացման գործում:

Ձեկուցողը հույս հայտնեց, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ևս ակտիվ մասնկացություն է ունենալու հոկտեմբերի 20-23-ը Երևանում հրավիրվելիք համաեվրոպական խորհրդաժողովին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

2. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Գնել Մուղնեցյանին և Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Արման Սարգսյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու երաշխավորության հարց:

Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիրբանդյանը ծանոթացրեց թեկնածուների անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց համապատասխան ամբիոնների միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, դոց. Ա.Ղազինյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Գնել Մուղնեցյանին և Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Արման Սարգսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

3. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Դիրբանդյան):

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիլբանդյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Ղազիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվավորությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

4. ԼՍԵՑԻՆ. 2015-2016 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. 2015-2016 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահներ ՀՀ սահամանդրական դատարանի նախագահ Գ.Հարությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Ե.Խունդկարյանը, Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյանը և ՀՀ սահամանդրական դատարանի անդամ Վ.Հովհաննիսյանը ներկայացրին հաշվետվություններ պետական քննությունների արդյունքների, պետական քննությունների կազմակերպման և ընթացքի, իրենց ղեկավարած հանձնաժողովների աշխատանքների մասին, ինչպես նաև հանդես եկան պետական քննությունների անկացման գործընթացի՝ և՛ կազմակերպական, և՛ բովանդակային առումով կատարելագործման առաջարկներով:

Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ.Ղազիսյանը հավաստիացրեց, որ ներկայացված առաջարկներն ապագայում լրացուցիչ քննարկման առարկա կդարձվեն և դրանց իրագործման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվություններն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

5. ԼՍԵՑԻՆ. 2016-2017 ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածության և դասախոսների անհատական բեռնվածության հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածության և դասախոսների անհատական բեռնվածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել 2016-2017 ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածության և դասախոսների անհատական բեռնվածությունը:

6. ԼՍԵՑԻՆ. Իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Իրավաբանական կլինիկայի տնօրեն Ն.Ավագյան):

Իրավաբանական կլինիկայի տնօրեն Ն.Ավագյանը ներկայացրեց տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

7. ԼՍԵՑԻՆ. Ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ ՈՒԳԸ նախագահ Լ.Պետրոսյան):

ՈՒԳԸ նախագահ Լ.Պետրոսյանը ներկայացրեց հաշվետվություն Ուսանողական գիտական ընկերության կատարած աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը, դոց. Ա.Սարգսյանը, դոց. Ա.Սերոբյանը:

Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը հատուկ ընդգծեց, որ Լ.Պետրոսյանի նախագահության օրոք Ուսանողական գիտական ընկերությունն աչքի է ընկել բացառիկ ակտիվությամբ՝ նախաձեռնելով բազմաթիվ՝ իրենց նախադեպը չունեցող, արժանահիշատակ միջոցառումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

8. Ընթացիկ հարցեր

8.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Սոնա Թևանյանի՝ «Правовое регулирование концессионного соглашения» վերտառությամբ մենագրությունը էլեկտրոնային հրապարակման երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ՝ «Правовое регулирование концессионного соглашения» վերտառությամբ մենագրությունը շարադրված է պատշաճ գիտական մակարդակով, երաշխավորել այն էլեկտրոնային հրապարակման:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան